ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.06.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/136

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 25.05.2021թ. թիվ 26/26-1/8319-2021 գրությամբ «Դառես» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 14.05.2021թ. թիվ 01/61-11163 գրության հիման վրա, 25.05.2021թ. թիվ 26/26-1/8319-2021 գրությամբ նախաձեռնել է «Դառես» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Դառես» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Դառես» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/136 ընթացակարգի քննության նպատակով 01.06.2021թ. ժամը 09:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 31.05.2021թ. գրությամբ միջնորդել է տրամադրել 2-3 աշխատանքային օր ժամկետ, որպեսզի Ընկերության շահերը ներկայացնող իրավաբանական գրասենյակը ծանոթանա նյութերին, ներկայացնի մասնագիտական դիրքորոշում և կարողանա իրականացնել Ընկերության շահերի պաշտպանությունը:

01.06.2021թ. ժամը 09:25-ին հրավիրված նիստի ընթացքում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից բավարարվել է վերջինիս միջնորդությունը և տրամադրվել է 3 աշխատանքային օր ժամանակ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ դիրքորոշում ներկայացնելու համար:

«Դառես» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««ԴԱՌԵՍ» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել Երևանի քաղաքապետարանի կարիքների համար հայտարարված «ԵՔ-ԲՄԾՁԲ-21/9» ծածկագրով բաց մրցույթին /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից՝ «ԴԱՌԵՍ» ՍՊԸ-ն ճանաչվել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-21/9» ծածկագրով բաց մրցույթի ընտրված մասնակից և նույն արձանագրությամբ որոշել՝ անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

«ԴԱՌԵՍ» ՍՊԸ-ն պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուն պես այն սահմանված ժամկետում և օրենքով սահմանված կարգով հաստատված ներկայացրել է պատվիրատուին (պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն):

Այնուհետև Երևանի քաղաքապետարանի կողմից 07.04.2021թ. armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով «ԴԱՌԵՍ» ՍՊԸ-ին ծանուցվել է պայմանագրի թիվ 1 համաձայնագրի նախագիծը օրենքով սահմանված ժամկետում հաստատելու և ներկայացնելու մասին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրություն համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի կողմից միակողմանի լուծվել է «ԴԱՌԵՍ» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագիրը՝ պայմանագրի թիվ 1 համաձայնագրի նախագիծը օրենքով սահմանված ժամկետում չներկայացնելու հիմքով:

Գործի իրավական հիմքերը և հիմնավորումները

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Ընթացակարգի Հրավերի 7.15 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար

ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելու ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն' մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված>>:

Ինչպես արդեն հայտնել ենք, «ԴԱՌԵՍ» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել Երևանի քաղաքապետարանի կարիքների համար հայտարարված «ԵՔ-ԲՄԾՁԲ-21/9» ծածկագրով բաց մրցույթին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից՝ «ԴԱՌԵՍ» ՍՊԸ-ն ճանաչվել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-21/9» ծածկագրով բաց մրցույթի ընտրված մասնակից և նույն արձանագրությամբ որոշել անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

«ԴԱՌԵՍ» ՍՊԸ-ն պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուն պես՝ այն սահմանված ժամկետում և օրենքով սահմանված կարգով ներկայացրել է պատվիրատուին (պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն):

Այնուհետև Երևանի քաղաքապետարանի կողմից 07.04.2021թ. armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով «ԴԱՌԵՍ» ՍՊԸ-ին ծանուցվել է պայմանագրի թիվ 1 համաձայնագրի նախագիծը օրենքով սահմանված ժամկետում հաստատելու և ներկայացնելու մասին:

Այնուհետև, Երևանի քաղաքապետարանի կողմից միակողմանի լուծվել է «ԴԱՌԵՍ» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագիրը՝ պայմանագրի թիվ 1 համաձայնագրի նախագիծը օրենքով սահմանված ժամկետում չներկայացնելու հիմքով:

Եվ այսպես, գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք դարձնում հետևյալ կարևորագույն հանգամանքի վրա, այն է.

«ԴԱՌԵՍ» ՍՊԸ-ն, պահպանելով Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, համաձայնագիր կնքելու մասին ծանուցումը և նախագիծը ստանալուց (07.04.2021թ.) հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում (07.04.2021թ.-մինչև 28.04.2021թ. ներառյալ), այն է՝ 28.04.2021թ.՝ փոստային առաքման միջոցով, ստորագրած համաձայնագիրը /կից փաստաթղթերով/ օրենքով սահմանված կարգով ներկայացրել է պատվիրատուին /համապատասխան ապացույցը կցվում է/, սակայն գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ արձանագրվել է, որ ՍՊԸ-ի կողմից հաստատված համաձայնագիրը սահմանված ժամկետում չի ներկայացրել:

«ԴԱՌԵՍ» ՍՊԸ-ն զրկվել է համաձայնագիր կնքելու իրավունքից, այլ հիմքով, թե իբր «ԴԱՌԵՍ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում կնքված համաձայնագիրը չի ներկայացրել, մինչդեռ այն հանգամանքը, որ «ԴԱՌԵՍ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ուղարկել պահանջվող փաստաթղթերը՝ ապացուցվում է թե «ՀԱՅՓՈՍՏԻ» ՓԲԸ-ի կողմից տրամադրված անդորրագրի, և թե Երևանի քաղաքապետարանի 14.05.2021թ. թիվ 01/61-11163 գրությամբ:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ մի շատ կարևոր հանգամանք, այն է. Երևանի քաղաքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված 14.05.2021թ. թիվ 01/61- 11163 գրությամբ արձանագրել է, որ «ԴԱՌԵՍ» ՍՊԸ-ն 28.04.2021թ. «ՀԱՅՓՈՍՏԻ» ՓԲԸ-ի միջոցով Պատվիրատուին է ուղարկվել կնքված համաձայնագիրը, և որպես թերություն նշվել է, որ վերոհիշյալ ծրարը «ՀԱՅՓՈՍՏԻ» ՓԲԸ-ից ելքագրվել է 30.04.2021թ., որի համար կարծես թե պետք է պատասխան տա ՍՊԸ-ն:

Մինչդեռ 28.04.2021թ. «ՀԱՅՓՈՍՏԻ» ՓԲԸ-ի անդորրագիրը և ծրարի վրա առկա պատճենը ապացուցում են այն հանգամանքը, որ «ԴԱՌԵՍ» ՍՊԸ-ն չի հրաժարվել համաձայնագիր կնքելուց, ավելին, օրենքով թույլատրելի եղանակով ստորագրված համաձայնագիրը սահմանված ժամկետի ընթացքում, այն է՝ 28.04.2021թ., է պատվիրատուին, սակայն պատվիրատուն անտեսելով վերոհիշյալը՝ որոշել է զրկել

«ԴԱՌԵՍ» ՍՊԸ-ին գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ երաշխավորված պայմանագիր կնքելու իրավունքից:

Մինչդեռ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված»: Իսկ ինչպես արդեն նշել ենք, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է, որ ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, պետք է ստորագրի և պատվիրատուին ներկայացնի այդ պայմանագիրը, ինչը տվյալ դեպքում կատարել է:

Գտնում ենք, որ նման փաստական հանգամանքներում «ԴԱՌԵՍ» ՍՊԸ-ին չի կարող վերագրվել համաձայնագիր կնքելուց հրաժարում, քանի որ, ինչպես արդեն նշվել է 28.04.2021թ. «ՀԱՅՓՈՍՏԻ» ՓԲԸ-ի միջոցով Պատվիրատուին է ուղարկել կնքված պայմանագիրը:

Գտնում ենք, որ նույն հիմնավորմամբ չէր կարող նաև Պատվիրատուի կողմից միակողմանի լուծվել «ԵՔ-ԲՄԾՁԲ-21/9» ծածկագրով պայմանագիրը՝ համաձայնագիրը չներկայացնելու հիմքով:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից՝ խնդրում ենք «ԴԱՌԵՍ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված որևէ խախտում, և վերջինիս չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»»:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 14.05.2021թ. թիվ 01/61-11163 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջների հիման վրա՝ 17.03.2021թ. Երևանի քաղաքապետարանի և «Դառեսս» ՍՊԸ-ի միջև կնքվել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-21/9» ծածկագրով «Երևան քաղաքում շրջիկ առևտրի կետը կամ

տրանսպորտային միջոցը հատուկ տարածք տեղափոխման ծառայությունների» գնման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Երևանի քաղաքապետարանի կողմից ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը հաստատվել է 24.03.2021 թվականին 9 000 000 ՀՀ դրամի չափով: 07.04.2021 թվականին ընկերությանը «armeps.am» էլեկտրոնային համակարգի միջոցով ծանուցվել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-21/9» ծածկագրով պայմանագրի թիվ 1 համաձայնագրի նախագիծը օրենքով սահմանված ժամկետում հաստատելու և ներկայացնելու համար, սակայն Ընկերության կողմից հաստատված համաձայանագիրը սահմանված ժամկետում չի ներկայացվել՝ 28.04.2021 թվականին մուտք է եղել «Հայփոստ» ՓԲ ընկերություն և 30.04.2021 թվականին դուրս է եկել «Հայփոստ» ՓԲ ընկերությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պատվիրատուն վկայակոչել է նաև Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետով և Պայմանագրի 7.15-րդ կետով սահմանված պահանջները:

Պատվիրատուն հայտնել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Դառես» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է Ընկերության հետ կնքված գնման պայմանագրից՝ համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն խնդրել է Ընկերության նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/136 ընթացակարգի շրջանակներում 01.06.2021թ. ժամը 09:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/136 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/136 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի և «Դառես» ՍՊԸ-ի միջև 17.05.2021թ. կնքվել է «ԵՔ ԲՄԾՁԲ-21/9» ծածկագրով ծառայությունների մատուցման պայմանագիր, որի համաձայն՝ «Դառես» ՍՊԸ-ն ստանձնել է Երևան քաղաքում շրջիկ առևտրի կետը կամ տրանսպորտային միջոցը հատուկ տարածք տեղափոխման ծառայությունների մատուցման պարտավորությունը համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

2. Պայմանագրի 1.2-րդ կետի համաձայն՝ ծառայությունը մատուցվում է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

3. Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Ծառայության մատուցման նախընտրելի ժամկետ է համարվում՝ պայմանագիրը (համաձայնագիրը) ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2023թ. դեկտեմբերի 25-ը, 2021թ. հատկացվող ֆինանսական միջոցների մասով՝ պայմանագիրը (համաձայնագիրը) ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2021թ. դեկտեմբերի 25-ը:

4. Պայմանագրի շրջանակներում ֆինանսական միջոցների առկայությամբ պայմանավորված Պատվիրատուն armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 07.04.2021թ.-ին Ընկերությանն է ուղարկել Պայմանագրի թիվ 1 համաձայնագրը և խնդրել է ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ուղղված գրությամբ Երևան քաղաքապետարան ներկայացնել:

5. «Դառես» ՍՊԸ-ին ուղղված 10.05.2021թ. թիվ 01/61-10663 գրությամբ Երևանի քաղաքապետարանը հայտնել է հետևյալը.

««Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջների հիման վրա՝ 17.03.2021թ. Երևանի քաղաքապետարանի և «Դառես» ՍՊԸ-ի միջև կնքվել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-21/9» ծածկագրով «Երևան քաղաքում շրջիկ առևտրի կետը կամ տրանսպորտային միջոցը հատուկ տարածք տեղափոխման ծառայությունների» գնման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Երևանի քաղաքապետարանի կողմից ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը հաստատվել է 24.03.2021 թվականին 9 000 000 ՀՀ դրամի չափով: 07.04.2021 թվականին ընկերությանը «armeps.am» էլեկտրոնային համակարգի միջոցով ծանուցվել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-21/9» ծածկագրով պայմանագրի թիվ 1 համաձայնագրի նախագիծը օրենքով սահմանված ժամկետում հաստատելու և ներկայացնելու համար, սակայն Ընկերության կողմից հաստատված համաձայանագիրը սահմանված ժամկետում չի ներկայացվել՝ 28.04.2021 թվականին մուտք է եղել «Հայփոստ» ՓԲ ընկերություն և 30.04.2021 թվականին դուրս է եկել «Հայփոստ» ՓԲ ընկերությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պատվիրատուն վկայակոչել է նաև Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետով և Պայմանագրի 7.15-րդ կետով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջները:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Դառես» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով սահմանված

պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է Ընկերության հետ կնքված գնման պայմանագրից՝ համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթը:

6. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 11.05.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության՝ 25.05.2021թ. թիվ 26/26-1/8319-2021 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 14.05.2021թ. թիվ 01/61-11163 գրությունը և կից փաստաթղթերը, «Դառես» ՍՊԸ-ի դիրքորոշումը՝ կից փաստաթղթով և գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ ***<u>պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ եթե պայմանագիրը կնքվել է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա,</u>*** սակայն տվյալ տարում նախատեսված չեն կամ նախատեսված են ավելի քիչ ֆինանսական միջոցներ, քան պայմանագրի գինն է, ***ապա պայմանագրում նախատեսվում է, որ հետագայում ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումն իրականացվում են համաձայնագիր կնքելու միջոցով:*** Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա պատվիրատուի կողմից համաձայնագիր կնքվում է, եթե պայմանագիր կնքած անձի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով սույն կարգի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, պայմանագրի կողմը համաձայնագիրը կնքում, իսկ ապահովումների փոխարինման

դեպքում նաև նոր ապահովումները պատվիրատուին ներկայացնում է ***համաձայնագիր կնքելու մասին <u>ծանուցումն ստանալու օրվանից</u> տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:*** Հակառակ դեպքում պայմանագիրը պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է.

Պայմանագրի 7.15-րդ կետով սահմանվում է, որ ***Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Ընդ որում, <u>Կատարողը համաձայնագիրը կնքում</u>, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու <u>ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում</u>: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:***

Այսպես, Երևանի քաղաքապետարանի և «Դառես» ՍՊԸ-ի միջև 17.05.2021թ. կնքվել է «ԵՔ ԲՄԾՁԲ-21/9» ծածկագրով ծառայությունների մատուցման պայմանագիր, որի համաձայն՝ «Դառես» ՍՊԸ-ն ստանձնել է Երևան քաղաքում շրջիկ առևտրի կետը կամ տրանսպորտային միջոցը հատուկ տարածք տեղափոխման ծառայությունների մատուցման պարտավորությունը համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2-րդ կետի համաձայն՝ ծառայությունը մատուցվում է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Ծառայության մատուցման նախընտրելի ժամկետ է համարվում՝ պայմանագիրը (համաձայնագիրը) ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2023թ. դեկտեմբերի 25-ը, 2021թ. հատկացվող ֆինանսական միջոցների մասով՝ պայմանագիրը (համաձայնագիրը) ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2021թ. դեկտեմբերի 25-ը:

Պայմանագրի շրջանակներում ֆինանսական միջոցների առկայությամբ պայմանավորված Պատվիրատուն armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 07.04.2021թ.-ին Ընկերությանն է ուղարկել Պայմանագրի թիվ 1

համաձայնագրը և խնդրել է ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ուղղված գրությամբ Երևան քաղաքապետարան ներկայացնել:

«Դառես» ՍՊԸ-ին ուղղված 10.05.2021թ. թիվ 01/61-10663 գրությամբ Երևանի քաղաքապետարանը հայտնել է հետևյալը.

««Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջների հիման վրա՝ 17.03.2021թ. Երևանի քաղաքապետարանի և «Դառես» ՍՊԸ-ի միջև կնքվել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-21/9» ծածկագրով «Երևան քաղաքում շրջիկ առևտրի կետը կամ տրանսպորտային միջոցը հատուկ տարածք տեղափոխման ծառայությունների» գնման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Երևանի քաղաքապետարանի կողմից ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը հաստատվել է 24.03.2021 թվականին 9 000 000 ՀՀ դրամի չափով: 07.04.2021 թվականին ընկերությանը «armeps.am» էլեկտրոնային համակարգի միջոցով ծանուցվել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-21/9» ծածկագրով պայմանագրի թիվ 1 համաձայնագրի նախագիծը օրենքով սահմանված ժամկետում հաստատելու և ներկայացնելու համար, սակայն Ընկերության կողմից հաստատված համաձայանագիրը սահմանված ժամկետում չի ներկայացվել՝ 28.04.2021 թվականին մուտք է եղել «Հայփոստ» ՓԲ ընկերություն և 30.04.2021 թվականին դուրս է եկել «Հայփոստ» ՓԲ ընկերությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պատվիրատուն վկայակոչել է նաև Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետով և Պայմանագրի 7.15-րդ կետով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջները:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Դառես» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է Ընկերության հետ կնքված գնման պայմանագրից՝ համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթը:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 11.05.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետով սահմանվում է, որ ***պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ եթե պայմանագիրը կնքվել է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա պայմանագրում նախատեսվում է, որ հետագայում ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումն իրականացվում են համաձայնագիր կնքելու միջոցով:*** Ընդ որում, պայմանագրի կողմը համաձայնագիրը կնքում, իսկ ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները պատվիրատուին ներկայացնում է ***համաձայնագիր կնքելու մասին ծանուցումն ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:***

Պայմանագրի 7.15-րդ կետով սահմանվում է, որ ***Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:***

Այսպիսով՝ վերը նշված իրավակարգավորումներով սահմանվում է հստակ ժամկետ համաձայնագիրը կնքելու համար, որը չպահպանելու դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Պատվիրատուն ֆինանսական միջոցների առկայությամբ պայմանավորված 07.04.2021թ. ծանուցել է Ընկերությանը Պայմանագրի թիվ 1 համաձայնագիրը՝ առաջարկելով ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում կնքված համաձայնագրի երկուական օրինակը Երևան քաղաքապետարան ներկայացնել, մինչդեռ՝ գործում եղած փաստերի համաձայն, արձանագրում եմ, որ Ընկերությունը Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետով և Պայմանագրի 7.15-րդ կետով սահմանված ժամկետում, այն է՝ ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում չի կնքել համաձայնագիրը և ներկայացրել Պատվիրատուին, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի լուծմանը:

Այսպիսով՝ վերը նշված փաստական հանգամանքներով պայմանավորված, գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, քանի որ Ընկերությունը սահմանված ժամկետում չի կնքել համաձայնագիրը, որի հետևանքով Պայմանագիրը լուծվել է:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ինչ վերաբերում է ՍՑ-ՆԳ-2021/136 ընթացակարգի շրջանակներում Ընկերության կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված «Հայփոստ» ՓԲԸ-ի 28.04.2021թ. անդորրագրին, որը ըստ Ընկերության ապացուցում է այն փաստը, որ «Դառես» ՍՊԸ-ն չի հրաժարվել համաձայնագիրը կնքելուց, ավելին Ընկերությունը ստորագրված համաձայնագիրը սահմանված ժամկետի ընթացքում, այն է՝ 28.04.2021թ. ներկայացրել է Պատվիրատուին, սակայն Պատվիրատուն անտեսելով այդ փաստը, արդյունքում լուծել է Պայմանագիրը, ապա սույն մասով հարկ եմ համարում արձանագրել հետևայլը.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ եթե կոնկրետ իրավահարաբերությունը կարգավորող նորմատիվ իրավական ակտով սահմանված է ժամկետների հաշվարկման այլ կարգ, ***<u>ապա տվյալ ակտով կարգավորվող իրավահարաբերությունների ժամանակ կիրառվում է այդ նորմատիվ իրավական ակտով սահմանված ժամկետների հաշվարկման կարգը:</u>***

Տվյալ դեպքում իրավահարաբերությունը կարգավորող Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետով և Պայմանագրի 7.15-րդ կետով կարգավորվել է համաձայնագիրը կնքելու համար սահմանված ժամկետի հաշվարկման կարգը, այն է՝ ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Այսպիսով՝ համաձայն գործում եղած փաստերի, Պատվիրատուի կողմից համաձայնագիր կնքելու ծանուցումը ուղարկվել է Ընկերությանը 07.04.2021թ., հետևաբար արձանագրում եմ, որ վերը նշված կարգավորումների համաձայն ժամկետը լրանում է 27.04.2021թ., մինչդեռ՝ համաձայն Ընկերության կողմից տրամադրված «Հայփոստ» ՓԲԸ-ի անդորրագրի, Ընկերությունը համաձայնագիրը ուղարկել է սահմանված ժամկետից ուշ՝ 28.04.2021թ., որպիսի պայմաններում գտնում եմ, որ

Պատվիրատուն՝ ղեկավարվելով Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետով և Պայմանագրի 7.15-րդ կետով և լուծելով Պայմանագիրը գործել է իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 25.05.2021թ. թիվ 26/26-1/8319-2021 գրությամբ «Դառես» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Դառես» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**